

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ՔՆ-ԲԸԱՇՁԲ-16/7 >>**

ք. Երևան

<<36> նոյեմբեր 2016թ.

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Ա. Մկրտչյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Խաչատուրյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Վ. Պետրոսյանի անվան N 51 հիմնական դպրոցի շենքի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրի N 1.1 Հավելվածով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 20.12.2016թ.:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից

վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև

անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված N 4) ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում

պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 15 օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝

Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 440040000 (չորս հարյուր քառասուն միլիոն քառասուն հազար) ՀՀ դրամ, որից 73340000 (յոթանասուներեք միլիոն երեք հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Սույն պայմանագիրը կնքվում է ընդհանուր՝ 440040000 (չորս հարյուր քառասուն միլիոն քառասուն հազար) ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ՝ 36580000 (երեսունվեց միլիոն հինգ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, քան պայմանագրի գինն է՝ Աշխատանքի մնացած մասը կկատարվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Աշխատանքի կատարման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2016թ.՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է:

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ

վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.7 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և

անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.8 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետակա
կոմիտե

ք.Երևան, Հանրապետության հրապար
կառավարական տուն 3

ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական
վարչություն

Հ/Հ 900011004604

ՀՎՀՀ 02565827

Քաղաքաշինության նախարարությա
աշխատակազմի

ղեկավարի պաշտոնակատար՝

Ա. ՄԱՆՆԻՍՅԱՆ



Կ.Տ.

Կապալառու

«Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ»
ՍՊԸ


Ք. Էջմիածին, Կույբիշևի 4ա

«Կոնվերսանկ» ՓԲԸ

Հ/Հ 1930050319870100

ՀՎՀՀ 047151

տնօրեն Ա. Խաչատուրյան



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

**Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 51 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ****

1	Աշխ-րի և ծախսերի շիֆորը	Աշխատանքների անվանումը	Է.մ.	Քանակ	Միավորի արժեքը հազ.դրամ	Ընդհանուրը հազ.դրամ
1	2	3	4	5	6	7
		Սասնաշենք 1				
		<i>Քանդման աշխատանքներ</i>				
		<i>1.Տանիք</i>				
1	46-98 կիրառելի	Տանիքի ձևավոր թիթեղից ծածկի ապամոնտաժում	100 քառ.մ	10.07	19.58	197.14
2	46-98 կիրառելի	Պատերի վրա ցիմկապատ թիթեղից ջրահեռացման առուների ապամոնտաժում	100 գծ.մ	1.46	9.54	13.93
3	10-70 գ-0,8	Տանիքի փայտե հենակմախքի ապամոնտաժում	խոր.մ	26.80	24.17	647.89
4	9-94 գ-0,6	Տաշտապողպատի ապամոնտաժում 20	տ	0.204	33.05	6.75
5	46-90	Փայտե վերնածածկի քանդում	100 քառ.մ	6.40	145.52	931.34
6	12-283 գ-0,6	Կտուրի մետաղական բազրիկների տեղադրում	100 գծ.մ	1.46	13.13	19.17
7	8-186	Ջրահեռացման խողովակների ապամոնտաժում	100 գծ.մ	1.30	10.13	13.17
8	46-98 կիրառելի	Ձևավոր թիթեղից հովհարի տանիքի ծածկի քանդում	100 քառ.մ	0.05	19.58	0.98
9	9-16 կիրառելի	Հավիարի մետաղական կարկասի ապամոնտաժում/ 10կ-տ/	տ	0.051	66.92	3.41
10	12-288 գ-0,5	Վերնածածկի վրա խարամից ջերմամեկուսիչ շերտի քանդում	խոր.մ	96.00	2.58	247.80
11	12-289 գ-0,6	Գոլորշամեկուսիչ շերտի քանդում	քառ.մ	640.00	0.15	93.57
		<i>Ընդամենը</i>				2175.15
		<i>2.Ծածկ</i>				
12	46-82	Շրջանակների տեղերում ե/բ հավաքովի ծածկերի քանդում	խոր.մ	7.29	22.36	162.99
13		Ե/բ ծածկի, վերնածածկի և կախովի հարթակի քանդում	խոր.մ	7.78	22.36	173.91
14	46-90	Փայտե ծածկերի քանդում	խոր.մ	1046.00	1.46	1522.16
		<i>Ընդամենը</i>				1859.06
		<i>3. Պատեր և միջնորմներ</i>				
15	46-40	Քարից պատերում բացվածքների իրականացում	խոր.մ	6.50	18.81	122.28
16	46-59 46-60	Օդափոխության խողովակների համար ակոսների փորում 250*250մմ	գծ.մ	23.20	6.69	155.28

17	46--80	Քարից պատերի քանդում	խոր.մ	42.0 0	7.62	320.04
18	46--80	Քարից քիվի քանդում h-35սմ	խոր.մ	1.47	7.62	11.20
19	46--80	Թեթև բետոնե բլոկներից միջնորմների քանդում 200սմ հաստ	խոր.մ	10.6 8	7.62	81.38
20	46--44	Հեծանների համար պատերում խողովների փորում/12,4խոր.մ/	հատ	258. 00	1.12	289.63
21	46--86	Փայտե միջնորմների քանդում	քառ.մ	449. 00	0.58	259.03
22	46--88	Թեթև բետոնե սալերից միջնորմների քանդում 100սմ հաստ	քառ.մ	96.3 5	0.81	77.71
		Ընդամենը				1316.5 4
		4.Ներքին և արտաքին աստիճաններ				
23	9--26 ռ	Սետադական բազրիքների ապամոնտաժում/վերադարձ/	գծ.մ	54.9 5	0.46	25.19
24	46--77	Արտաքին աստիճանների տակ գոյություն ունեցող բետոնե հիմքի քանդում	խոր.մ	1.5	1.24	1.86
		Ընդամենը				27.05
		5.Պատուհաններ				
25	46--122 օգտ	Փայտե պատուհանների ապամոնտաժումպատուհանագոգերի հետ միասին	քառ.մ	421. 75	1.98	833.00
26	88--174 գ-0,5	Ապակեբլոկների քանդում	քառ.մ	41.6 0	0.07	3.09
27	9--105 գ-0,6	Ալյումինե պատուհանների ապամոնտաժում	քառ.մ	5.94	3.25	19.32
28	9--34 գ-0,6	Սետադական ճաղերի ապամոնտաժում	քառ.մ	96.8 7	3.30	319.83
		Ընդամենը				1175.2 3
		6.Ղռներ				
29	46--124	Փայտից ղռների ապամոնտաժում	քառ.մ	227. 41	1.15	262.48
30	9--34 գ-0,6 կիրառելի	Սետադապլաստե ղռների ապամոնտաժում	քառ.մ	1.40	3.30	4.62
31	9--34 գ-0,6	Սետադական ղռների ապամոնտաժում	քառ.մ	19.4 8	3.30	64.32
		Ընդամենը				331.41
		7.Հատակներ				
32	46-119	Ցեմենտե հարթեցնող շերտի քանդում	100 քառ.մ	10.1 9	35.40	360.75
33	49-99	Բետոնե նախապատրաստական շերտի քանդում	խոր.մ	57.8 6	15.34	887.85
34	46--109	Խնցեգործական սալիկներից հատակների քանդում	100 քառ.մ	1.11	42.21	46.86
35	46--102	Փայտե հատակների քանդում լազաների հետ միասին	100 քառ.մ	2.59	44.53	115.33
36	46--103 կիրառելի	Լամինատե հատակների քանդում	100 քառ.մ	1.48	53.53	79.22

37	46--103	Մանրատախտակե հատակների քանդում	100 քառ.մ	9.49	53.53	507.98
38	46-119	Խճահատակ հատակների քանդում	100 քառ.մ	6.56	35.40	232.24
		<i>Ընդամենը</i>				2230.2 4
		8.Ներքին հարդարում				
39	n11--223 կիրառելի	Պատերի վրայից սվաղի քանդում	քառ.մ	2686 .91	0.92	2468.2 4
40	46--94 կիրառ	Առաստաղի գիպաստվարաթղթե սալիկների ապամոնտաժում	քառ.մ	147	0.67	98.13
41	13--5	Պատերի վրայից խեցե սալիկների քանդում	քառ.մ	36.0 2	0.59	21.12
		<i>Ընդամենը</i>				2587.4 9
		9.Այլ աշխատանքներ				
42	1-1587	Էքսկավատորով շինարարական աղբի բարձուն ավտոինքնաթափերի վրա 0,65խոր.մ շերտալի տարողությամբ	1000 խոր.մ	0.33	436.7 9	144.80
43	C310-12	Շին աղբի տեղափոխում 12կմ	տ	596. 70	2.26	1350.5 7
44	1-1605	Աշխատանք աղբակույտի վրա	1000 խոր.մ	0.33	35.97	11.92
		<i>Ընդամենը</i>				1507.2 9
		Ամրացման և վերականգնման աշխատանքներ				
		1. Հողային աշխատանքներ				
45	1-961	Բնահողի մշակում ձեռքով մինչև 20մ տեղափոխումով	100 խոր.մ	3.33	215.0 0	715.93
46	1-1587	Ավելորդ բնահողի բարձուն մեխանիզմով ավտոինքնաթափի վրա	1000խ որ.մ	0.08 9	436.7 9	38.87
47	310-12	Տեղափոխում մինչև 12կմ	տ	160. 20	2.26	362.60
48	1-968	Բնահողի հետլիցք ձեռքով տեղափոխելով 20մ	100 խոր.մ	2.44	89.91	219.37
49	1-1184	Բնահողի տոփանում պնևմատոփանով	100 խոր.մ	2.44	21.41	52.24
		<i>Ընդամենը</i>				1389.0 2
		2. Հիմքեր				
50	6-1	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B-7,5 դասի բետոնից	խոր.մ	2.90	26.61	77.18
51	6--14	Խամբարբետոնե հիմքերի իրականացում B-12,5 դասի բետոնով	խոր.մ	55.5 0	37.13	2060.5 5
52	6--5	Ե/բ սյունակալների պատրաստում B25 B-դասի բետոնով	խոր.մ	7.60 00	60.88	462.65
53		A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.20 40	298.7 9	60.95
54	6--160	Ե/բ հիմնային հեծանների իրականացում B-25դասի բետոնով	խոր.մ	8.00 0	361.5 1	2892.0 8
55		Ac-1 դասի ամրանի արժեքը	տ	0.38 0	290.9 3	110.55

56		A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.75 7	298.7 9	226.18
57	6--22 կիրառ	Ե/բ հիմնային գոտու իրականացում B-25դասի բետոնով	խոր.մ	15.0 0	55.52	832.75
58		Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.77 4	290.9 3	225.18
59		A-500c դասի ամրանի արժեքը	տ	1.55 5	298.7 9	464.62
		Հնդամենը				7412.7 0
		3.Պատեր				
60	15--10 տեխ մաս 15--59 կետ 1,5	Որմնախարիսիսի երեսապատում 30մմ հաստ բազալտե սալիկներով 7,7-(0,08*7), 0,15-(0,005*7), 10,2-(0,15*7),/Ուերառյալ աստիճանների և թեքահարթակների կողային մաերը/	քառ.մ	20.6 5	21.94	452.96
61		Ցանցի ձգում պատերի վրա Վո-1	տ	0.05 13	341.8 0	17.53
62	8--531	Տուֆ քարից պատուհանագոգերի վերանորոգում հ-20սմ մինչև 6 ջարդվածքով	գծ.մ	3.10	21.33	66.11
63	8--531	Տուֆ քարից քիվի վերանորոգում հ-20սմ մինչև 9 ջարդվածքով	գծ.մ	9.00	32.65	293.83
64	8--163	Բացվածքների շարք կանոնավոր ձևի տուֆ քարով	խոր.մ	33.5 0	18.71	626.62
65	6--125	Պատերում փոքր բացվածքների բետոնացում B-15դասի բետոնով	խոր.մ	10.5 0	97.86	1027.5 6
66	8-59	Շարվածքի ամրանավորում ցանցով Եց-2	տ	0.15	399.8 1	60.77
67		Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.02 2	290.9 3	6.40
68		A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.02 8	298.7 9	8.37
69	6--128	Պատերում խոռոչների բետոնացում թեթև բետոնով B-10դասի բետոնով	խոր.մ	7.50	46.13	345.97
70	6--128	Պատերում ակոսների բետոնացում թեթև բետոնով B-15դասի բետոնով	խոր.մ	6.50	46.23	300.49
71	6--162	Պատ Ձ առանցքով՝ պարզունակի իրականացում իրականացում B-25դասի բետոնով	խոր.մ	3.00	77.82	233.46
72		Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.15 7	290.9 3	45.68
73		A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.31 5	298.7 9	94.12
74	6-106	Շրջանակ 1-;-5,միածույլ Ե/բ սյուների իրականացում B-25 մակնիշի բետոնով	խոր.մ	28.4 0	89.57	2543.9 3
75		Ac-I դասի ամրանի արժեքը	տ	1.28 8	290.9 3	374.71
76		A-500c դասի ամրանի արժեքը	տ	7.10 6	298.7 9	2123.0 6
77	6-83	Միջադիր էլեմենտների տեղադրում ՄՆ-1	տ	0.02	792.2 7	16.64

78	6-162	Շրջանակ 1-;-5 միաձույլ ե/բ պարզունակների իրականացում B-25 մակնիշի բետոնով	խոր.մ	58.0 0	77.82	4513.6 2
79		Ac-I դասի ամրանի արժեքը	տ	3.34 3	290.9 3	972.57
80		A-500c դասի ամրանի արժեքը	տ	7.75 7	298.7 9	2317.7 2
81	6-83	Միջադիր էլեմենտների տեղադրում ՄՆ-1	տ	1.52	792.2 7	1204.2 4
82	6-145	Ե/բ օդափոխության հորանների իրականացում B-15դասի բետոնով	խոր.մ	4.00	77.70	310.79
83		A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.12 9	298.7 9	38.54
84	46-15	Բացվածքների ամրացում մետաղական շրջանակներով	տ	2.04 3	137.1 5	280.20
85		Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.04 1	290.9 3	11.93
86		A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.26 0	298.7 9	77.69
87		Անկյունակ 70*70	տ	1.20 1	391.7 6	470.51
88		Տաշտապողպատի արժեքը	տ	0.15 6	407.6 1	63.59
89		Շերտապողպատ	տ	0.38 5	405.4 0	155.88
90	6-247 6-249	Բացվածքների ամրացում տորկրետ բետոնով n=70մմ B-25դասի բետոնով	քառ.մ	47.8 6	8.86	424.24
91	46-189	Պատերի սյուների և պարզունակների մեջ հորիզոնական անցքերի բացում d=25մմ b-300մմ	100 հատ	0.85	109.6 1	93.17
92	46-189 46-205	Պատերի սյուների և պարզունակների մեջ հորիզոնական անցքերի բացում d=25մմ b-500մմ	100 հատ	80.8 4	142.6 9	11534. 75
93	46-189 46-205	Պատերի սյուների և պարզունակների մեջ հորիզոնական անցքերի բացում d=25մմ b-200մմ	100 հատ	2.10	93.07	195.46
94	6-168	Ե/բ գոտու պատրաստում B-25դասի բետոնից	խոր.մ	25.5 0	65.65	1674.0 3
95		Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.75 8	290.9 3	220.52
96		A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.72 9	298.7 9	217.82
97	6-247 6-249	Սյուների ամրացում տորկրետ բետոնով n=70մմ B-20դասի բետոնով /2,3խոր.մ/	քառ.մ	33.0 0	8.86	292.52
98	6-359	Ամրացվող պատերի վրա ցանցի ձգում	տ	0.36 4	36.16	13.16
99		Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.06 8	290.9 3	19.78
100		A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.29 6	298.7 9	88.44
101	6-247 6-249	Պարզունակների ամրացում տորկրետ բետոնով n=70մմ B-20դասի բետոնով /9խոր.մ/	քառ.մ	128. 57	8.86	1139.6 7
102	6-359	Ամրացվող պատերի վրա ցանցի ձգում	տ	1.36 1	36.16	49.21

103		Վո -1 ցանցի արժեքը	տ	0.28 6	341.8 0	97.75
104		A-500c դասի ամրանի արժեքը	տ	1.07 5	298.7 9	321.20
105	6-247 6-249	Պատերի ամրացում տորկրետ բետոնով n=50մմ B-25դասի բետոնով /311խոր.մ/	քառ.մ	4443 .00	6.36	28251. 04
106	6--359	Ամրացվող պատերի վրա ցանցի ձգում	տ	23.7 31	36.16	858.11
107		A-500c դասի ամրանի արժեքը	տ	11.2 35	298.7 9	3356.9 2
108		Վո -1 ցանցի արժեքը	տ	12.4 96	341.8 0	4271.0 8
109	23-45	Երեսապատման քարերի մեջ վերտիկալ անցքերի բացում ավմաստե գայլիկոնով d=20մմL-20մմ	100 հատ	1.72	13.42	23.09
110	35-37-57	Անցքերի ներարկում պոլիմեր -ցեմենտե շաղախով	խոր.մ	0.01 0	62.34	0.62
		Ընդամենը				72198. 07
		4.Ծածկեր				
111	46-5	Ծածկի սալերի ամրացում B-25 դասի բետոնով	խոր.մ	35.0 0	88.42	3094.6 7
112		Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.17 2	290.9 3	50.04
113		Նույնը, BP-I	տ	1.93 1	341.8 0	660.01
114		A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.53 1	298.7 9	158.66
115	6-173	Միաձուլվ ե/բ ծածկի սալի իրականացում B-25դասի բետոնից US-1:-US6	խոր.մ	242	67.00	16212. 96
116		Ac-I դասի ամրանի արժեքը	տ	2.08 0	290.9 3	605.13
117		A-500c դասի ամրանի արժեքը	տ	32.6 78	298.7 9	9763.9 0
118	6--163	Ե/բ հեծանների պատրաստում B-25դասի բետոնից Յ1,Յ2,Յ3	խոր.մ	35.0 0	74.92	2622.2 1
119		Ac-I դասի ամրանի արժեքը	տ	1.74 7	290.9 3	508.25
120		A-500c դասի ամրանի արժեքը	տ	8.09 9	298.7 9	2419.9 1
121	7--734	Ծածկի բացվածքների ամրացում մետաղական էլեմենտներով	տ	0.01 9	603.7 1	11.47
		Ընդամենը				36107. 22
		5.Աստիճաններ				
122	7-736	Աստիճանների մետաղական բազրիքների տեղադրում h=90սմ	100 զժ.մ	0.93	938.7 0	869.24
123	11-500	Աստիճանաքայլերի և աստիճանահարթակի պատում բազալտից սալիկներով 30մմ հաստ.	քառ.մ	169. 70	14.99	2543.5 6
124	11-252	Շրիշակների իրականացում բազալտե սալիկներով H-100մմ	100 զժ.մ	1.82 0	82.89	150.87
125	15-614	Մետաղական բազրիքների յուղաներկում	100 քառ.մ	0.84	95.84	80.50
		Ընդամենը				3644.1 7
		6.Տանիք				

126	6-1	Բետոնե թմբիկների իրականացում B-15 դասի բետոնից /350*400*400/	խոր.մ	2.9	26.61	77.18
127	10-70	Տանիքի փայտե կարկասի էլեմենտների տեղադրում /ծպեղնաուռք, մարդակ, պարկուկ, կանգնակ, թեքան, ծայրակցորդ, լրաց. տախտակ, ձգան, շարենգ. ֆերմա, որմնափայտ, լրացուց. հենարան/	խոր.մ	25.2 5	201.4 8	5087.2 7
128	10-201	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանում	խոր.մ	25.2 5	10.23	258.18
129	12-299 12-300	Ցեմենտյա հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստ	100 քառ.մ	8.01	112.6 6	902.40
130	12-289	Գոլոշամեկուսացման իրականացում տոլով բիտումի քսուկի վրա, 1 շերտ	100 քառ.մ	8.01	99.20	794.62
131	12-288-1	Ծածկի ջերմամեկուսացում խարամով, 30սմ հաստութ.	խոր.մ	8.01	6.51	52.16
132	12-404	Տանիքի ծածկի իրականացում ձևավոր ցինկապատ թիթեղից ԿՊ25-0,55մմ հաստ, փայտե կավարամածի պատրաստումով	100 քառ.մ	8.49	595.5 1	5055.9 1
133	12-280	Ցինկապատ ալիքավոր 0,55մմ հաստ թիթեղից փոքր ծածկույթների իրականացում/թիթեղե գոգնոցներ/	100 քառ.մ	4.25	302.4 9	1285.5 8
134	12-278	Պատերի վրա ջրահեռացման առունների պատրաստում ցինկապատ թիթեղից 0,55մմ հաստ	100 զծ.մ	1.30	1197. 89	1557.2 6
135	12-283	Կտուրի մետաղական բազրիկների տեղադրում	զծ.մ	125. 00	22.80	2849.7 2
136	9-46	Մետաղական հակահրդեհային ՍԱ-1 սանդուղքների տեղադրում	տ	0.18 8	128.7 6	24.21
137		Մետաղական սանդուղքների արժեքը	տ	0.18 8	546.1 1	102.67
138	10-71	Ձեղնահարկի պատուհանների տեղադրում	հատ	9.00	55.47	499.23
139	9-46	Մետաղական սանդուղքների տեղադրում դեպի տանիք	տ	0.08 2	128.7 6	10.56
140		Մետաղական սանդուղքների արժեքը	տ	0.08 2	546.1 1	44.78
141	9-118	Կտուրի մտոցի մետաղական դռան տեղադրում /ջերմամեկուսացված /	տ	0.03	87.02	2.18
142		Կտուրի մտոցի մետաղական ջերմամեկուսացված դռան արժեքը	քառ.մ	0.64	39.63	25.36
143	15-614	Մետաղական բազրիքների և աստիճանների յուղաներկում 2 անգամ	100 քառ.մ	0.90	95.84	86.25

144	12-276	Շենքի ճակատի եզրակալում գործարանային ներկածածկույթով քիթեղից, այդ բվում /ջրիոս խողովակների պատուհանագոգերը և այլն	100 քառ.մ ճակա տ	13.7 9	65.94	909.31
		<i>Ընդամենը</i>				19624. 84
		<i>7.Միջնորմներ</i>				
145	8-169	Թեթև բետոնե սալերից միջնորմների իրականացում 10սմ հաստ	100 քառ.մ	5.32	301.5 9	1604.4 5
146	8-140	Միջնորմների շարում թեթև բետոնե բլոկներով 20152/0,016 *20*40սմ	խոր.մ	9.60	19.11	183.44
147	8-150	Անցքերի լցափակում թեթև բետոնով B 15դասի	խոր.մ	21.9 8	31.32	688.39
148		Սանհանգույցներում մետաղապլաստե էլեմենտներից միջնորմների տեղադրում	քառ.մ	15.6 0	16.98	264.95
149	6-83	Միջադիր էլեմենտների տեղադրում	տ	1.23	792.2 7	970.53
150	8-59	Շարվածքի ամրանավորում ցանցով	տ	0.34	399.8 1	135.93
151	7-338	Ռետինե կողադիրների տեղադրում	քառ.մ	24.5 0	12.14	297.47
152	6-170	Ե/բ բարավորների իրականացում B15դասի բետոնով	խոր.մ	2.00	70.56	141.12
153		Ac-I դասի ամրանի արժեքը	տ	0.14 4	290.9 3	41.89
154		A-500c դասի ամրանի արժեքը	տ	0.24 0	298.7 9	71.71
		<i>Ընդամենը</i>				4399.8 8
		<i>8. Պատուհաններ</i>				
155		Մետաղապլաստե պատուհաններ երկտակ ապակեփաթեթով, ջերմակամրջակով բացվող /ճերառյալ արժեքը տեղադրումը, տեղափոխումը/	քառ.մ	183. 91	23.66	4350.9 2
156		Մետաղապլաստե պատուհաններ երկտակ ապակեփաթեթով, ջերմակամրջակով չբացվող /ճերառյալ արժեքը տեղադրումը, տեղափոխումը/	քառ.մ	73.0 5	16.15	1179.7 3
157		Մետաղապլաստե պատուհաններ երկտակ ապակեփաթեթով, ջերմակամրջակով կամարածև չբացվող /ճերառյալ արժեքը տեղադրումը, տեղափոխումը/	քառ.մ	23.0 2	16.15	371.77
158		Ալյումինե պատուհաններ երկտակ ապակեփաթեթով, ջերմակամրջակով բացվող /ճերառյալ արժեքը տեղադրումը, տեղափոխումը/	քառ.մ	3.60	65.45	235.62
159	10-103	Պլաստմասից պատուհանագոգեր 0,65սմ լայնութ	քառ.մ	300. 83	3.78	1136.2 5

Ընդամենը

9. Ցուցափեղկեր

160		Այլումինե ցուցափեղկեր երկտակ ապակեփաթեթով, չբացվող առանց ջերմակամրջակի /ճերմառայալ արժեքը տեղադրումը, տեղափոխումը/	քառ.մ	20.2 1	29.75	601.25
161		Այլումինե ցուցափեղկեր երկտակ ապակեփաթեթով, ջերմակամրջակով չբացվող /ճերմառայալ արժեքը տեղադրումը, տեղափոխումը/	քառ.մ	17.2 5	36.55	630.43

Ընդամենը

10. Դռներ

162		Այլումինե դռների տեղադրում ջերմակամրջակով կրկնաշերտ ապակեփաթեթով 60մմ պրոֆիլով /տեղադրումը, տեղափոխումը փականների հետ միասին ներառված է գնի մեջ/	քառ.մ	11.0 2	68.00	749.36
163		Այլումինե կամարածև դռների տեղադրում ջերմակամրջակով կրկնաշերտ ապակեփաթեթով 60մմ պրոֆիլով /տեղադրումը, տեղափոխումը փականների հետ միասին ներառված է գնի մեջ/	քառ.մ	8.68	68.00	590.24
164		Այլումինե դռների տեղադրում առանց ջերմակամրջակով կրկնաշերտ ապակեփաթեթով 60մմ պրոֆիլով /տեղադրումը, տեղափոխումը փականների հետ միասին ներառված է գնի մեջ/	քառ.մ	60.0 5	36.55	2194.8 1

165	9--34	Սետաղական հակահրդեհային դռան տեղադրում	քառ.մ	7.00	68.73	481.12
166	10-105	Փայտյա կարկասով ապակեպատ 8մմ հաստ ՄԴՖ-ով երեսապատծ, դռների տեղադրում փականների հետ միասին	քառ.մ	125. 98	50.58	6371.4 4

Ընդամենը

11. Ֆատակներ

167	11--3 11--5	Կոպճավազե նախապատրաստական շերտի իրականացում 400մմ 40% ավազ 60% կոպիճ	խոր.մ	62.3 7	5.36	334.42
168	11-11	Ֆատակների տակ խարամաբետոնե նախապատրաստական շերտի իրականացում B-12,5 դասի բետոնից 10սմ հաստ	խոր.մ	57.0 1	28.28	1612.2 4

169	6-86	Բետոնե նախապատրաստական շերտի ամրանավորում 4ռ-1 դասի ամրանով	տ	0.29 7	368.6 9	109.50
170	11-11	Հատակների տակ բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B-12,5 դասի բետոնից 100 մմ հաստ	խոր.մ	6.10	34.09	207.96
171	11-11	Հատակների տակ բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B-12,5 դասի խարամաբետոնից 5սմ հաստ	խոր.մ	26.7 2	34.09	910.95
172	11-55	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 20մմ հաստուք.	100 քառ.մ	1.72	81.90	141.11
173	11-55 11-56	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստուք.	100 քառ.մ	22.1 7	113.7 7	2522.3 5
174	11-18	Բիտումի քսուկի վրա տոլով ջրամեկուսացման իրականացում 1 շերտ	100 քառ.մ	0.93	262.5 9	243.42
175	11-135	Հատակի պատում խեցեգործական սալիկներով սան.հանգուցներում 30*30սմ	100 քառ.մ	0.90	533.2 0	479.61
176		Հետերագեն ՊՎԲ 4,5մմ հաստ 1մմ պաշտպ շերտ լավորակ որակյալ լինուլեումե ծածկույթի իրականացում սոսնձի հետ միասին/տեղափոխումը,տեղադրումը ներառված գնի մեջ/	100 քառ.մ	1.42 15	1050. 00	1492.5 8
177	11-205	2մմ հաստ լավորակ լինուլեումե հատակի ծածկույթի իրականացում /ՊՎԲ-2մմ/0,7մմ պաշտպանիչ շերտով	100 քառ.մ	12.0 4	925.0 0	11137. 93
178	11-198	Լավորակ լամինատե հատակի ծածկույթի իրականացում 8մմ հաստ շրեշակներ և սպունգի հետ միասին	քառ.մ	176. 65	5.30	935.50
179	11-135 կիրառ	Հատակի ծածկույթի իրականացում լավորակ փայլատ մանլագրանիտե սալիկներով 600*600սմ	քառ.մ	564. 86	13.65	7708.3 9
180	11-252	Շրեշակների իրականացում լավորակ մանլագրանիտե սալիկներով h-10սմ	100 գծ.մ	6.04	136.6 8	826.09
		Ընդամենը				28662. 05
		12.Ներքին հարդարում				
181	15-246-1	Պատերի և սյուների լավորակ սվաղ գաջով	100 քառ.մ	46.7 7	197.7 4	9248.2 2
182	15-247-1	Առաստաղի և հեծանների լավորակ սվաղ գաջով	100 քառ.մ	19.8 3	236.3 6	4687.0 7
183	15-276-1	Առաստաղի քսահարթեցում գաջով	100 քառ.մ	3.99	137.8 9	550.30

184	15-277-1	Նույնը, դռների և պատուհանների շեփույթումների համար	100 քառ.մ	7.23	468.7 2	3388.8 2
185	15-256	Պատերի լավորակ սվաղ ցեմ.-ավազ. շաղախով	100 քառ.մ	2.26 8	163.6 1	371.06
186	15-257	Նույնը, առաստաղների համար	100 քառ.մ	0.76	167.1 3	127.02
187	34--388	Օդափոխության հորանների երեսապատման մետաղական կարկասի պատրաստում	քառ.մ	42.5 0	3.92	166.50
188	34--389	Օդափոխության հորանների երեսապատում գիպաստվարաթղթով	քառ.մ	42.5 0	6.62	281.53
189	10--28	Ձայնակլանիչ վահանակների համար կարկասի իրականացում	խոր.մ	0.15 2	192.4 8	29.26
190	26--31	Ձայնակլանիչի կարկասի մեջ հանքային բանջակի տեղադրում 50մմ հաստ 0,05*71,28	խոր.մ	0.51 3	154.8 1	79.42
191	26--73	Հանքաբանջակի փաթաթում քաթանով 71,28*2	քառ.մ	10.2 6	0.97	9.91
192	10--33	Ձայնակլանիչի կարկասի կարանում Ֆաներա յով 5մմ հաստ	քառ.մ	10.2 6	1.95	20.04
193	15-660	Պատերի, սյուների և շեփույթումների լավորակ ներկում լատեքսաներկով	100 քառ.մ	36.2 5	86.45	3134.0 2
194	10--34	Պատերի խորշերի երեսապատում փայտյա վահանակներով /նրբատախտակ 16մմ/	100 քառ.մ	0.03	546.9 7	15.59
195	15-661	Առաստաղների և հեծանների լավ որակ ներկում լատեքսաներկով	100 քառ.մ	23.8 2	98.54	2347.6 4
196	15--568	Պատերի յուղաներկում 2 անգամ լավորակ յուղաներկով	100 քառ.մ	9.44	87.50	826.46
197	15-84	Պատերի երեսապատում խեցեակիկներով 270*370	100 քառ.մ	2.27	595.5 0	1350.5 9
198	34-389	Սան. հանգույցներում պլաստմասե շերտաձողերով կախովի առաստաղի իրականացում, հիմնակմախքի պատրաստումով.	քառ.մ	83.5 5	9.97	832.97
		<i>Ընդամենը</i>				27466. 42
		<i>13.Արտաքին հարդարում</i>				
199	n11--1	ճակատային հին սվաղի վերանորոգում ցեմենտ ավազային շաղախով	քառ.մ	81.5 0	3.84	313.10
200	14--321	Պատերի մակերեսի մաքրում ներկից	քառ.մ	182. 00	0.19	34.86
201	15-304	ճակատային պատերի վրա ցանցի ձգում	քառ.մ	209. 50	1.91	399.24
202	15--201	ճակատային պատերի վրա սվաղ ցեմ ավազե շաղախով	քառ.մ	209. 50	1.38	289.67

203	15--525	Ճակատային պատերի ներկում լավորակ ճակատային ներկով տախտակամածի վրայից	քառ.մ	291.00	0.43	125.53
